ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ:
ԹԻՖԼԻԶ Օլգինսկայա փող. տ. № 31—33 (Զինուորական նահանգական դատարանի և Օլգինսկի ինստիտուտի հանդէպ), բաց են ամէն օր (բացի կիրակի և տօն օրերից), առ. 10 ժ. մինչև 12½-ը կէսօրից յետոյ: Անձնական տեսակցութիւն քարտուղարի հետ՝ Երեքշաբթի և Ուրբաթ առ. 11—12 ժ.
Տելեֆոն № 282:

ՏԱՐԱԶ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ընդունւում են ամեն լեզւով տողը մէկ երրորդական Տարազի, վերջին երեսը 25 կ. մանրատառ (պետիտ): Կրկնւող յայտարարութիւններն առանձին համաձայնութեամբ:
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ՝ տարին 6 ր. (արտասահման 10 ր.) առանձին №-ը 20 կ.
ՀԱՍՑԷՆ՝ ТИФЛИСЪ, ред. «ТАРАЗЪ»
Rédaction du journal TARAZ-Tiflis (Caucase).

Գեղարուեստական, գրական, գիտական, քննադատական

պատկերազարդ շաբաթաթերթ. լոյս է տեսնում շաբաթը մի անգամ՝ կիրակի օրերը:

№ 33 կիրակի սեպտեմբերի 8 | տասներեքերորդ տարի 1902

† ՌՈՒԴՈԼՖ ՎԻՐԽՈՎ

—

Գիտնական աշխարհի երկնակամարի վրայ փայլող աստղերից մի ամենափայլունը—իմաստասէր եւ մարդասէր պրոֆէսոր Ռուդոլֆ Վիրխովը կնքեց իր մահկանացուն օգոստոսի 23-ին, ցերեկուայ ժամը 2-ին: Մարդս մահկանացու է, հազարաւորներն են մեռնում կարճ միջոցում, բայց Վիրխովի նման հոգու, մտքի եւ սրտի տէր մարդիկ շատ քիչ են ծնւում եւ նրանից մահը՝ մարդկութեան առաջադիմութեան տեսակէտից, մի սոսկալի կորուստ է: Վիրխովը ծնւել է Պոմերանիում 1821 թ.: Նրա հայրը միջին կարողութեան տէր վաճառական էր: Վիրխովը՝ Կէսլինի գիմնազիոնի դասընթացն աւարտելուց յետոյ, մտաւ Բերլինի բժշկական-վիրաբուժական ճեմարանը, ուր այն ժամանակ դասախօսում էին երեւելի պրոֆէսորներ՝ Իոհան Միւլլէրը եւ Շէյնլէյնը: Այդ երկու հռչակաւոր պրոֆէսորները մեծ ազդեցութիւն ունեցան Վիրխովի վրայ: Համալսարանական դասընթացն աւարտելուց յետոյ, նա մտաւ ծառայութեան Charité հիւանդանոցը եւ սկսեց ուսումնասիրել ախտաբանական-վիրաբուժութիւն, որ իր գլխաւոր մասնագիտութիւնը դարձրեց: Վիրխովի ամբողջ կեանքը նւիրած էր գիտութիւնը առաջ տանելու եւ ամենուրեք լուսաւորութիւն տարածելու գործին: Նրա գործունէութիւնը բազմակողմանի էր եւ արդիւնաւոր, նա առաջնակարգ դեր էր բռնել գիտնական աշխարհում, որպէս՝ ախտաբան, կենդանաբան, մարդաբան, քաղաքագէտ եւ առողջագէտ, առաւել եւս այս վերջինի մէջ նա երեւելի էր եւ ոչ մի ազգ չէ կարող ասել, թէ այդ երեւելի անձնաւորութեան տւած օգուտը չէ տարածւել համայն աշխարհում: Թողնելով մեզանից աւելի հմուտներին նկարագրելու Վիրխովի գործունէութիւնը, իբրեւ գիտնականի եւ հեղինակի, մենք, ընթերցողներ, ասենք ի մի բերան՝ «Աստւած ողորմի նրա հոգուն, յիշատակը անմոռաց լինի»:



† ՌՈՒԴՈԼՖ ՎԻՐԽՈՎ

—

ԱՌԱՋԻՆ ԱՄՈՒՍԻՆԸ

(Նովելլա)

(Գեկինց Տօլօտ)

Տխուր հանդիսի վերջին մասնակցողները ճանապարհի շեղումից անյայտացան:

Վերջին յարգանքս տւի մեռածին, որպէս մօտիկ բարեկամիս կնոջ. և այժմս դարձեալ փնտրում էի արւեստակցիս գերեզմանը, որին այստեղ դեռ գարնանը մենք ուղեկցեցինք նրա՝ երկար կռւով ձեռք բերած փառքի հէնց արշալոյսին:

Ես անցայ այն տեղով, ուր մշակները դեռ ևս զբաղւած էին գերեզմանը ծածկելով:

Ամուսինը պաստորի հետ գնաց այստեղից առաջինների հետ: Իմ աչքիս առաջ գերեզմանափորները գցեցին գործը և գնացին ուրիշ տեղ, որտեղ հարկաւոր էր պատրաստել նոր գե-

բեղման։ Անցնելուց ես նայեցի կիսածածկված դերեզմանին և յանկարծ մօտս լսեցի խորը հառաչանք։ Ես յետ նայեցի։ Կողքիս կանգնած էր մի մարդ, գլխարկը առաջից պահած. նա ինձ ծանօթ երևաց, միայն թէ չըկարողացայ իսկոյն յիշել թէ որտեղ եմ ես նրան տեսել, մինչև նա չըբարձրացրեց իր աչքերը և չընայեց ինձ։ Այն ժամանակ ես նրան ճանաչեցի։

Այժմ, երբ նա մեկնեց ինձ իր ձեռքը և իմ յիշողութեանս մէջ յարուցեց նրա անունը։ Նա մի յայտնի տպարանի տէր էր, և ես մի ժամանակ նրա հետ գործ եմ ունեցել։

Նրա աչքերը թաց էին. ձեռքը շփեց երեսին և կիսածածկ դերեզմանին յառած հայեացքով ասաց.

—Այնքան շատ էին հանգուցեալի յուղարկաւորները, որ ես չըհամարձակուեցի խառնուել սգալի հանդէսին։ Սպասեցի այնտեղ, քարի ետևը և հեռուից նայում էի, թէ ինչպէս էին նրան թաղում։

Ես զարմացած նայեցի նրան՝ թէ ինչ յարաբերութիւններ արդեօք կարող էին կապել նրա հետ և ինչ պատճառ ստիպեց նրան հեռու պահել իրան։ Երեւի նա այդ հարցը կարդաց երեսիս, որովհետև շատ համեստ և հաղիւ նշմարելի ժպիտով ասաց.

—Նա մի ժամանակ իմ կինս է եղել...

Ես շփոթուեցի այդ խօսքերից, և զարմացած նայեցի նրա երեսին։

Կարծեմ ես լսել էի, թէ հանգուցեալը մի անգամ էլ ամուսնացած է եղել, բայց չըգիտէի թէ ում հետ. և շատ զարմացայ, որ այս հանդիստ և համեստ մարդը առաջին ամուսինն է եղել այդպիսի վայելուչ աշխարհային կնոջ։ Այժմ ես նրան նայեցի բոլորովին ուրիշ հայեացքով։

Սա նրա առաջին ամուսինն էր։ Քաղաքի կենդրոնում, նեղ փողոցում, որտեղ լսում էր գործարանական հաստատութիւններից յառաջացած մեքենայի մշտական աղմուկը, ուրեմն մի ժամանակ, նշանակում է, ապրել է նա։

Ի հարկէ, հին, համարեա թէ փլուող տունը լաւ չէր համապատասխանում նրա արիստոկրատիական շարժուածքներին, բոլորովին ուրիշ բան էր այն նորագոյն ճաշակով շրեղ վիլլան, որտեղ նա անց կացրեց իր կեանքի տասնամեակը։

—Նա մի ժամանակ եղել է իմ կինս, կըրկնեց այս մարդը։ Իսկ այսօր ես նստել էի այնտեղ մեր երեխայի դերեզմանի մօտ և չըվճռեցի մօտենալ...

Նա լռեց։ Դեղին աւազը՝ փչող քամուց, թափւում էր բաց դերեզմանի մէջ։

Նա նայեց ինձ և շարունակեց.

—Այո, մենք մի երեխայ ունէինք, մի փոքրիկ, սիրելի աղջիկ. բայց նա չապրեց և մինչև երեք տարին մեռաւ գիշերը, երբ մենք երկուսով հիւր էինք գնացել։ Ես կամենում էի մնալ տանը հիւանդ երեխայի հետ, բայց նա չըթողեց և ես ստիպուած էի գնալ նրա հետ. և երբոր լուսաբացին մենք վերադարձանք, աղախինը քնած էր, իսկ երեխան կենդանի չէր։ Այստեղից էլ սկսուեց. ես չըկարողացայ ինձ զսպել և վշտացած նրա վրայ աւելի նախատինքներ թափեցի, բան նա գուցէ արժանի էր։ Բայց ես չըկարողացայ զսպել ինձ և շարունակում էի նրան մեղադրել։

Նա ինձ չընդդիմախօսեց ոչ մի խօսքով, սակայն օրէցօր մենք աւելի ու աւելի խորթանում էինք միմեանցից, մինչև բոլորովին դադարեցինք միմեանց հասկանալուց։

Երբ յայտնուեց, որ այն միւսը, որ նրա կարծիքով աւելի լաւ էր հասկանում իրան, քան ես, այն ժամանակ ես զգացի, որ նա սխալւում է. հարկաւոր էր նրան ասել միայն մէկ խօսք և բոլորը կրկին կարդի կընկնէր։ Չէ որ ես նրան միշտ սիրում էի, ես մենակ նրան պիտի սիրեմ. միայն հարկաւոր խօսքերը չեմ գտնում, չեմ կարողանում ասել այդ։ Ես ամաչում էի խօսել իմ զգացմունքներիս մասին, կարծես թէ դա ինչ որ մի վատ բան էր. նա այդ չէր հասկանում, բոլորովին հաշիւ չէր առնում և ոչ մի անգամ ինձ չօգնեց։ Նա միշտ սպասում էր առաջինը, որ ես մի խօսք ասէի, բայց յամենայն դէպս չէ որ նա էլ պարտաւոր էր ինձ մի ջերմ խօսք ասել...

Ինչպէս որ նա էր վերջին ժամանակում, ես նրան չըճանաչեցի և ես երբէք չէի կարողանում այդ բոլորը երեւակայել։ Ճշմարիտ է մենք սկզբում հին տանը շատ հասարակ և համեստ էինք ապրում, թէև կարող էինք աւելի լաւ սարքուել։

Նա երբէք չէ ունեցել ոչ մի ցանկութիւն, երբէք ոչ մի բան ինձնից չէ խնդրել, երբէք չէր պահանջում նոյն իսկ ամենաչնչինը։

Ամեն բանից նա կարծես թէ գոհ էր։ Եւ եթէ մեր երեխայի հետ այն դէպքը չըպատահէր, ես, հաւանականօրէն, այսօր հեռու չէի կանգնի, առանց նրա վրայ որևէ իրաւունք ունենալու։ Միակ պահանջը, որ նա ինձ յայտնեց, միակ ցանկութիւնը, որ նա արտայայտեց, եղաւ այս խնդիրը, այս աղաչանքը, որը ես սկզբից չհասկացայ.

-Տուր ինձ ապահարզան...

Այստեղ ես գտայ առաջին խօսքերը, այստեղ ասացի նրան այն բոլորը, ինչ որ զգացի։ Բայց

արդէն շատ ուշ էր. նա բոլորովին չըփոխեց իր վճիռը և նրա այդ առաջի ինդիրը ես պէտք է վերջապէս կատարէի... Բայց նորա ամուսնութեան մէջ նա չըգտաւ ոչ մի առաւելութիւն, այդ ես դիտեմ նորա սեփական խօսքերից։

Այս ամառ ես առաջին և վերջին անգամ պատահեցի նրան, այստեղ, գերեզմանատանը, մեր երեխայի գերեզմանի մօտ, փոքրիկի ծնընդեան օրը։

Այդ ժամանակ ես նստած երազում էի և մտածում մօր մասին, ենթադրելով թէ երեի բոլորովին մոռացել էր երեխայի կարճատև կեանքի մասին։

Իմ ետեւից ինչ որ ձայն բարձրացաւ. ես ետ նայեցի, առաջիս կանգնած էր նա սաստիկ շփոթուած և վախեցած։

Նա ուզում էր ետ դնալ, բայց ես նրա առաջ բայց արի վանդակապատը և նա անվճռականապէս նստեց մեր ընտանեկան գերեզմանի նստարանի վրայ...

Գլուխը ցած գցած և ձեռքերը ծալած ծնկների վրայ, լուռ նստեց։ Մենք չէինք իմանում թէ ինչի մասին խօսենք միմեանց հետ, ինչպէս սկսենք, մինչև որ ես տիրապետեցի իմ զգացմունքներին. ինձ վախեցնում էին նոյն իսկ իմ սեփական խօսքերը, որ լսում էին կարծես օտարից.

—Ներողակալ եմ որ դու բոլորովին չես մոռացել մեր երեխային։

Նա շարժեց գլուխը և ասաց. «Ես ամեն տարի եղել եմ այստեղ, ամեն տարի այս օրը, և ուրիշ ժամանակներում ես եղել եմ յաճախ։ Չէ՞ որ ես միայն այդ միակ երեխան ունէի»։

Ես ձեռքս մեկնեցի նրան։ Նա նայեց ինձ և տուեց իրը ու թողեց իմ ձեռքերիս մէջ։

—Դու չես բարկանում ինձ վրայ, որ ես մի ժամանակ քեզ վիշտ եմ պատճառել, հարցրեց նա։

Ես միայն կարողացայ գլուխս շարժել, որովհետև արտասուքը խեղդում էր ինձ։

Նա շարունակեց.

«Իսկ դու դեռ մենակ ես, ա՞խ, եթէ երեխան կենդանի մնար»։

—Այո՛, ասացի ես, այն ժամանակ շատ բան ուրիշ տեսակ կըդասաւորուէր։

—Այո՛, շատ, և գուցէ այն ժամանակ աւելի լաւ լինէր։

Ես նայեցի նրան շւարած և հարցրի.

—Մի՞թէ դու բախտաւոր չես, չըգտա՞ր։ Նա դառն և ցաւագար կերպով ժպտաց.

—Բախտաւո՞ր, ինչ է նշանակում այդ. բախտը, ի հարկէ, մենք փնտրում ենք, բայց արդեօք գտնում ենք։

—Ուրեմն, բոլորն այնպէս չէ, ինչպէս դու կարծում էիր։

—Ո՛չ. շատ ուրիշ կերպ. բայց հարկաւոր է գոհ լինել։

—Հարկաւոր է, այո՛, բայց ոչ միշտ կարելի, այն ժամանակ ահա դու գոհ չէիր։

—Ա՜յն ժամանակ, այն ժամանակ ես ոչինչ չըգիտէի. չէ՞ որ ես այնքան քիչ էի ծանօթ կեանքի հետ...

—Ուրեմն այժմ դու ուրիշ կերպ կը կարծէիր, ուրիշ կերպ կըվարուէիր։

—Ով գիտէ. բայց դու ինչպէս ես ապրում։

—Խաղաղ և միայնակ, գործ կայ. միայն ոչ ոք չըկայ, որի համար գործեմ։

—Ոչ ո՞ք, որքան դա ցաւալի է և որքան այդպիսի մարդիկ կան, որոնք չըգիտեն թէ ում համար են ապրում։

Յետոյ նա այնպիսի ջերմ, թախծալից քնքշութեամբ էր խօսում մեր երեխայի մասին, որ ես երբէք չէի տեսել նրան այնպէս։ Եւ նա առաջինը եղաւ, որ ինձ բերեց այն գիտակցութեան, թէ ինչից եմ ես բոլորովին զրկուել, ինչ եմ ես կորցրել։ Փոխադարձ մտերմութեան ըզգացմունքը տիրեց մեզ այնպէս, որ երբէք չէինք զգացել, և ես ցանկանում էի հարցնել նրանից, թէ արդեօք նա չէ տխրում, չի՞ վերադառնայ ինձ մօտ։

Բայց այդ ժամանակ նա բարձրացաւ և հարցը մնաց անկատար։ Ամուր սեղմեց ձեռքս և գնաց ամաչկոտ «մնաս բարեաւով»։ Կարծես զգաց, որ ես ունիմ մի ցանկութիւն, որը կատարել չի կարելի։ Այլևս ես նրան չըտեսայ։

Ես կամենում էի զրել նրան, բայց չէի վըստահանում։

Այստեղ ես լսեցի նրա հիւանդութեան մասին։ Երեք անգամ ուղարկեցի նրա վաղուցայ սիրած սպիտակ մեխակը, բայց նա իր մասին ոչինչ տեղեկութիւն չէր տալիս. և միայն երէկ, վերադառնալով ճանապարհորդութիւնից, իմացայ, որ նա մեռել է։

Ոչ ոք ինձ չըհրաւիրեց. անկոչ՝ ես կանգնեցի հեռու մեր աղջկայ գերեզմանի մօտ։ Եւ ահա այժմ ունիմ երկու առանձին գերեզմաններ, որոնց հարկաւոր է միացնել։

Ո՛չ մի իրաւունք չունեմ ես հանգուցեալի վրայ...

Ի՞նչ կասէր նրա ամուսինը, ինչ կըմտածէին նրա նոր բարեկամները, եթէ ես կանգնէի նրանց մէջ։

Բայց և այնպէս չէ՞ որ նա մի ժամանակ առաջ ինձ էր պատկանում, նա իմս էր, ոչ միայն մէկ տարով. այդ իրաւունքը ոչ ոք ինձանից չի կարող առնել։ Ես միայն բաւականաչափ

վճռողականութիւն չունէի նրանից օգտուելու։

Ես չեմ ցանկանում խանգարել նրա հանգստութիւնը։

Բնիր խաղալ, թէև ես մի կողմ պիտի կանգնեմ։ Մնաս բարև, մնաս բարև այժմ։

Նա կռացաւ, վերցրեց աւազը և երեք անգամ լիքը բռով գցեց կիսածածկ փոսը։

—Մնաս բարև...

Եւ, կարծես թէ ես այնտեղ չէի, շուռ եկաւ նա, առանց ետ նայելու, գնաց ինձանից, խաչերի և գերեզմանների դամբարանների մէջ, որոնց վրայ թափւում էին՝ լուռ ծառերից, աշնան առաջին տերևները։ Գլուխը քաշ գցած նա քայլում էր, կռացած ճղների տակ, կարծես ցանկանում էր փախչել այնտեղից, ուր այժմ հանգստանում են նրա երկու թանկագին անձնուէրութիւնները և ուր երբևիցէ հէնց իրան էլ կբերեն վերջին հանգիստը տալու և զուցէ կըղնեն հեռու այս նոր հանգուցեալից։

Ա. Խաչատրեան

ԱՇԽԱՐՀԻԿ ՏԻԿԻՆ

Վէպ Հեկտոր Մալոյի, նկարներ Էմիլ Բայարի

IV

Նրանք երկուսն էլ սաստիկ յուզուած էին և նայում էին իրար վրայ փայլուն աչքերով և դժգոյն դէմքով։

—Եթէ մենք նրան մենակ գտնենք, ասաց Լեսպարկուան, ես իսկոյն կըյայտնեմ նրան ուրախալի լուրը և դուք կըտեսնէք, ինչպէս նա բախտաւոր կը լինի։

Բայց Ժօֆրուան, յիշելով այն խօսակցութիւնը որ նա լսել էր առաւօտեան կնոջ ընդունարանում, ակամայից հարցնում էր իրան թէ Գաբրիէլը կուրախանա՞յ իրաւ այն լուրը առնելով։ Անհանգստութիւնը տիրում էր նրան, քանի որ նրանք մօտենում էին տանը։

Նրանց դուռ բաց անող ծառան տուեց Ժօֆրուային մի տոմսակ, որը կարդալուց յետոյ, տուեց տանտիրոջը։

«Գնում ենք ճաշելու, Ցեօլինդան, տիկ. դը-Բօդեմօնը և Լինյին (ի հարկէ) Սէն-Ժերմէն։ «Գաբի»։

Լեսպարկուան մոլորուած էր։

—Իրաւ է, նա չըգիտէ... ասաց նա։

Բայց այդ մեկնութիւնը նրանց չըհանգստացրեց և չըվերադարձրեց առաջուան ուրախ տրամադրութիւնը։

Տագնապալի ճաշից յետոյ երկուսով, ընդարձակ սեղանատան դահլիճում, Լեսպարկուան առաջարկեց փոխային դըօմինելու գնալ։

—Ես ձեզ անհանգիստ չեմ անում։

—Ի՞նչ միտք է։

—Ես այնքան երջանիկ եմ, սիրելի Ժօֆրուա, երբ Գաբրիէլի և ձեզ հետ եմ լինում։ Բայց այդ երջանկութիւնով ես այնքան յաճախ չեմ օգտւում, որքան ցանկալի էր։ Մի՞թէ կարծիք, թէ... սա կշտամբանք է։ Շատ բնական է, որ դուք գնում էք ձեր կալուածքի կարկատանների վրայ հսկելու համար, ի հարկէ ես չեմ կարող ձեզ մեղադրել։ Նոյնպէս շատ բնական է, որ սիրելով գիտութիւնը, դուք գնում էք աշխատելու ձեր բարեկամների արուեստանոցներում, միայն կարող եմ նկատել, որ դուք կարող էիք ձեր պալատէգի մէջ արուեստանոց շինել և այն ժամանակ ձեզ չէր հարկաւոր բացակայել։

—Ես նոյնպէս, ինչպէս դուք, իմ յարգելի, չէի ցանկանայ, որ իմ խօսքերի մէջ դուք կշտամբանք նկատէք, առաւել ևս դէպի ձեզ ուղղուած կշտամբանքը ոչ մի միտք չէր ունենայ, այնու ամենայնիւ, ես պէտք է խոստովանեմ, որ Գաբրիէլը իր կամակոր վարմունքով և ինձ հետ ունեցած յարաբերութիւնով հարկադրում էր ինձ բացակայել։

—Այո, այո, դուք արդար էք, ես համաձայն եմ։

Երբ նրանք վերադարձան ապարանքը, նրանք երկար պէտք է սպասէին Գաբրիէլին։ Նա վերադարձաւ տուն գիշերուան 12 ժամը անցած։ Սպասելու րոպէները երկուսին էլ ծանր էին թւում։

Որովհետև Գաբրիէլին ասին թէ նրան սպասում են, նա ներս մտաւ դահլիճ զարմացած և դռան մօտ կանգնած, նայեց չուրջը հետաքրքրուած հայեացքով։

—Մենք սպասում ենք քեզ, ասաց Լեսպարկուան,

աշխատելով հանդիսատ խօսել, որ բոլոր տպաւորութիւնը վերջին մնայ:

—Ուրեմն ես դատաւորների առաջն եմ կանգնած, ասաց նա և նրա ձայնի մէջ լսւում էր դրգռմունք:

—Է՜, ոչ: Ամենևին: Ե՛կ ինձ մօտ, նստի՛ր և լսէ:

—Ես լսում եմ:

Նա շպրտեց գլխարկը սեղանի վրայ և նստեց հօր դէմ, խրւելով բազկաթոռի մէջ, որպէս մի մարդ, որ պատրաստւում է լսել երկար և տաղտկալի պատմութիւն:

—Ես այսօր հանդիպայ Պրօբիին, երբ նա դուրս էր գալիս քո մօտից:

—Ա՜խ:

Ժօֆրուան հսկում էր նրա վրայ և նկատեց, որ նա բաւական չէր այդ բացատրութիւնը իր բերանից դուրս թռչելուց:

—Դու, ինչպէս նկատում եմ, հասկանում ես, թէ նա ինձ ինչ ասաց:

—Հաւանական է նոյնը, ինչ ինձ էր ասել:

—Բեղ ի՞նչ էր ասել:

—Այն, որ իմ տարութեան մէջ ոչ մի վատնդաւոր բան չըկայ և ինքն իրան կանցկենայ:

—Այո՛, այդպէս էլ է, ասաց Լեպարկուան, նշանաւոր կերպով նայելով փեսայի վրայ:

—Ի՞նչ կայ, հարցրեց Գաբրիէլը:

—Ես ուզում եմ ասել, թէ մեզ հարկաւոր չէր անհանգիստ լինել:

—Ինչպէս տեսնում ես, բոլորովին անհանգիստ չէի, ըստ որում դնացի օրս վերջացնել Սէն-Ժերմէնում:

—Դուցէ դա անզգուշութիւն էր, նկատեց Ժօֆրուան:

—Անզգուշութի՞ւն է դնալ Սէն-Ժերմէն տարւայ այս միջոցին, ասաց նա:

—Այդ ճշմարիտ է, շարունակեց Լեպարկուան, որ դու լաւ առողջութեան տէր ես, դու կարող ես այն նախազգուշութիւնները դործ չդնել, որոնք պէտք են ուրիշներին, բայց այնուամենայնիւ դու պէտք է հիմա քեզ պահպանես:

—Պահպանե՞մ ինձ, զգուշանա՞մ: Այդ ինչո՞ւ համար:

—Մենք, կարծեօք, իրար չենք հասկանում, ընդհատեց Ժօֆրուան:

—Մեղաւորը ես եմ, ասաց Լեպարկուան, ես պարզ չէի խօսում: Բանը նրանումն է, տղջիկս, որ Պրօբիի կարծիքով դու յոգի ես:

—Դատարկ բան, բացականչեց նա:

—Նա տեսնում է քո մէջ յղութեան բոլոր նշանները:

—Այդ անհնարին բան է: Ինչո՞ւ նա ինձ այդ չասաց:

—Երևի այն պատճառով, որ այդ դեռ ենթադրութիւն է:

—Տեսնում ես, ուրեմն ես ճշմարիտ եմ խօսում, ասելով, թէ նա սխալւում է:

—Արդեօք դու ինքնահաւան չե՞ս, կարծելով թէ Պրօբիից լաւ ես ճանաչում յղութեան նշանները:

—Երբ դործը ինձ է վերաբերում, այո՛:

—Պրօբին մեծ հեղինակութեան տէր մարդ է:

—Այնուամենայնիւ նրան անսխալական չէ կարելի համարել:

—Պրօբիի նման մարդու ենթադրութիւնը, յամենայն դէպս, մեզ իրաւունք է տալիս ուրախանալու և մենք ըսպասում էինք, որ յայտնենք քեզ այդ նշանաւոր նորութիւնը: Եթէ ոչ, ինչի՞ է նման. ահա մի տարի է, որ դու ամուսնացել ես և երեխայ չունես: Գիտես, այդ սկսում էր անհանգստութիւն պատճառել:

—Միայն թէ՝ ոչ ինձ:

—Է՜հ, այդ մի՛ ասի: Տեսնենք ինչ կըլինի:

Ժօֆրուան չէր սխալւած, կարծելով որ Գաբրիէլը չի ուրախանայ յայտնած նորութիւնից, ինչպէս այդ կարծում էր նրա հայրը, բայց չէր հասկանում այն կամակորութիւնը, որ նա թոյլ չէր տալիս նոյնիսկ յղի լինելու հաւանականութիւնը: Այդ ի՞նչ էր նշանակում:

V

Ժօֆրուայի և Գաբրիէլի պսակը իրաւ է այնպէս գլուխ եկաւ, ինչպէս Լեպարկուան էր ասում: Բայց նա չանհանեց այն իսկական պատճառները, որոնք հարկադրեցին այդ փառաւոր և ամենուրեք փայլելու ձգտող դոս ոգ օրիորդին չքաւոր մարդուն իր համար ամուսին ընտրել:

Որքան հայրը պարծենում էր իր ծագումով, այնքան աղջիկը ամաչում էր նրանից, չընայելով իրանց ունեցած հարստութեանը:

Գաբրիէլը ցանկանում էր փայլել ոչ մի ուրիշ տեղ, այլ միայն Պարիզում՝ հերցոգուհու կամ կոմսուհու թագը դլխին: Բայց սպասածը չէր կատարւում: Սկզբում դեռ այդ բանը նրան անհանգիստ չէր անում, բայց հետզհետէ նրա մէջ տիրեց անհանգստութիւն: Միևնոյն ժամանակ Լեպարկուա անունը ճնշում էր, ստրկացնում էր նրան և նա չտապում էր վայր գցել նրան: Նրա պահանջները իշխանուհու կոչումից քայլ առ քայլ ցածրանում էր հերցոգուհու, յետոյ մարքիզուհու, կոմսուհու կոչումներին, բայց չընայելով այդ զիջումներին, ցանկացած նշանածը լոյս չէր ընկնում: Այն ժամանակ Տէօլինդան յայտնեց նրան կոմս Կանօէլի մասին, որը ըստ երևոյթին ունէր ցանկացած յատկութիւնները: Նա ոչ իշխանազն էր և ոչ հերցոգ, այլ միայն կոմս, բայց նա պատկանում էր ամենահին և ամենայարգելի ազնուականների դասակարգին: Կոմս Ժօֆրուա դը-Կանօէլը մի դեղեցկատես երիտասարդ էր, բարեհոգի, բայց մի վոքր լուրճ և բոլորովին նման չէր իսկական պարիզեցի իր հօրը: Ժօֆրուան աւելի գաւառացի էր, ձիանները նրան չէին զբաղեցնում, նա ջերմաջերմ սիրում էր գեղարուեստը, այցելում էր նկարիչների արուեստանոցներ և ինքն էլ պարապում էր նկար-

Գաբրիէլը լուսամտից նայում է Ժօֆրուային:

չութիւնով: Գաւառացի խօսքը վախեցրեց Գաբրիէլին, բայց այդ վերաբերում էր աւելի նրա դրութեանը, քան թէ նրա բնաւորութեանը: Կարողութիւնը կորցրած լինելով, Կանօէլը չէր կարող Պարիզում ապրել և հարկադրւած էր տեղափոխւել իր մօր հետ իրանց կիսաւէր ամրոցը, որ յայտնի էր մի ժամանակ իր երամակով և Պարիզ էր գալիս ժամանակ առ ժամանակ: Հիմա Ժօֆրուան Պարիզումն էր և նրան կարելի է տեսնել՝ երբ նա առաւօտները անցնում էր ձիով զբօսելու համար:

Այն ժամանակ Գաբրիէլը յայտնեց իր հօրը, թէ Կանօէլը նրա ամուսինը կըլինի և ուրիշ ոչ ոք: Նա ասաց Ժօֆրուան ով է և չըմոռացաւ յիշել նրա տոհմական ազիւսակը:

—Կարողութիւնից զրկւած մի մարդ, բացականչեց Լեպարկուան:

—Իսկ եթէ նա կարողութիւնը կորցրած չըլինէր, մթթէ նա կը պսակւէր ինձ հետ:

—Բա կարողութիւնով դու կարող ես ընտրել ու-

Գաբրիէլը իր հօր հետ:

Տէօլինդան ցոյց տւեց նրան Գաբրիէլին և որովհետև նա արժան էր նրա մասին ստացւած տեղեկութիւններին, այդ պատճառով ամեն օր որոշ ժամանակ Գաբրիէլը լուսամտի առաջն էր կանգնած: Առաջին և երկրորդ անգամին Ժօֆրուան ոչինչ չընկատեց, երրորդին նա նկատեց նրան և չորրորդին որոնում էր նրան աչքերով, այնուհետև իւրաքանչիւր անգամ այդ տեղով անցնելիս, նա կամաց էր գնում գնալիս և վերադառնալիս, որ յարմար լինի գլուխը վեր բարձրացնելու:

զածդ ամուսինը:

—Այո, միայն վողջու

չունի, չարունակեց Գաբրիէլը, իսկ ես մեծ կոչում, այդպիսով մեր կապակցութեան մէջ տիրելու է լիովին հաւասարութիւն և մենք չենք կարողանալ կշտամբել իրար: Նրա չքաւորութիւնը ունի այն լաւ կողմը, որ դու կարող ես նրան քո ձեռքի մէջ պահել, իսկ դա շատ նշանաւոր բան է, ըստ որում ինձ միջոց կըտայ վարուել նրա հետ իմ ցանկութեան համաձայն:

VI

Հիմա հարկաւոր էր հնար գտնել ծանօթանալ կոմս Կանօէլի հետ և նրան միտք ներշնչել՝ գեղեցկութիւնով նրա համակրութեանը արժանացած օրիորդի վրայ և այդ այնպէս կարգադրել, որ թւի, թէ այդ բոլորը դարւում ինքն ըստ ինքեան: Իր սովորական ճարպիկութիւնով Տէօլինդեան կարողացաւ այդ գործն էլ գլուխ բերել:

Ըստ որում Կանօէլի հողերը կրկին և կրկին գրաւ էին դրած և վաղուց է արդէն վաճառւելու էին, բայց առնող չըկար, կոմս դը-Լինյին իր կնոջ թելադրութիւնով գրեց Փօֆրուային, թէ ճանաչում է մի հարուստ, շատ հարուստ դրամատիրոջ, որը ցանկանում է Նօրմանդիայում գնել լաւ հողեր, ամրոցով, դաշտերով և անտառով և հարցնում էր, թէ արդեօք նրա կալուածքը համապատասխանում է այդ պահանջներին: Սկսեց թղթակցութիւն, այնուհետև նշանակեցաւ կալուածքը տեսնելու օր և վերջապէս Փօֆրուան զարմացած տեսաւ մի օր իր տունը եկած, Հօսման ճեմելքի գեղեցկուհի օրիորդին, հօր և իր ընկերուհի կոմսուհի դը-Լինյիի հետ:

Առաջին իսկ անգամից Գաբրիէլը ցոյց չըտուեց, թէ նրան չէ ճանաչում:

—Ա՜, դուք այն վայելչակազմ երիտասարդն էք, որով ես զմայլում էի, այն երիտասարդը, որ բարձրացնում էր իր գլուխը իմ լուսամուտի առաջով անցնելիս: Արդեօք բախտի բերմունք չէ՞ այս:

—Բռնեց, ասաց Տէօլինդեան, որ մի րոպէ մնացել էր Գաբրիէլի հետ: Վերջացրու բանդ:

Գաբրիէլը հրապուրելու կարօտութիւն չունէր, նա ինքն էլ լաւ էր տեսնում, թէ ինչ տպաւորութիւն է գործում և աշխատում էր ճարպիկութիւնով օգուտ քաղել իր յաջողութիւնից: Թէ Փօֆրուան յափշտակուած էր նրա գեղեցկութիւնով, այդ նորութիւն չէր նրա համար: Հիմա հարկաւոր էր գործը այնպէս տանել, որ նրա միտքը և սիրտը Գաբրիէլի վերաբերմամբ ջերմ յիշողութիւն պահէին:

Ընդարձակ, բարձր և մռայլ պահապանների դահլիճի քանդակագործ զարդարանքները, որ պարունակում էին մի ամբողջ վէպ, նորատի աղջկը լուրջ մտածմունքների մէջ ընկղմաւ: Սպիտակ մարմարինով և վարդագոյն կայծաքարով շինած վառարանով զարդարուած սեղանատան դահլիճը Գաբրիէլին շատ դուր եկաւ: Քարէ սիւնազարդ սանդուղքների մասին նա յայտնեց, թէ դրանից գեղեցիկ բան դեռ չէր տեսել: Իսկ Լիւդովիկոս XIII-ի և Լիւդովիկոս XIV-ի համար ննջարանի տեղ ծառայած ննջարանի մէջ, թւում էր, թէ նա պատրաստ է աղօթք անել: Բայց Գաբրիէլը աւելի երկար մնաց այն աշտարակի մէջ, որ թանգարան էր դարձրած և ուր փոշոտած դարակների վրայ դասաւորուած էին Կանօէլների տոհմական մատեանները: Քնքշաւոր յարգանքի նշանով նա խնդրեց Փօֆրուային, այդ գրքերից մէկը բաց անել և որովհետև նա ինքը չէր կարող հնադարեան և ժամանակից դեղնած թերթերի վրայի գրութիւնը ջոկել, խնդրեց իրան օգնել: Եւ այն միջոցին, երբ Լեպարկուան և Տէօլինդը լուսամուտին յենած պարտէզներին էին նայում, Գաբրիէլը և Փօֆրուան գլուխները միևնոյն թերթի վրայ կախած, այնպէս որ Փօֆրուայի միրուքը քսւում էր Գաբրիէլի թշին, կարդում էին Կանօէլի նախնիքներից մէկի պսակադրութեան դաշնագիրը: Եւ Գաբրիէլը դաշնագիրը մինչև վերջը կըկարդար, եթէ նրա հայրը սպասելուց տաղտկացած, չընդհատէր այդ զբաղմունքը: Նրանք ամբողջ ամրոցը տեսնելուց յետոյ իջան պարտէզը և այնտեղից գնացին ձիանոցը տեսնելու: Այնտեղ էլ ամէն ինչ գրաւում էր Գաբրիէլի ուշադրութիւնը և նրա գովասանքներին արժանանում:

—Իմ նօտարը կը բանակցէ ձերի հետ, կոմս, ասաց Լեպարկուան կառք նստելիս:

Նօտարները բանակցեցին և վաճառաթերթի տեղ կազմեցին ամուսնութեան դաշնագիր, որ երկու կողմին էլ նոյնիսկ նօտարներին աւելի հաճելի թւաց: Եւ մի ամիս յետոյ այդ դաշնագիրը ստորագրեցին Կանօէլը և Լեպարկուան:

Գաբրիէլի ցանկութեան համաձայն, դաշնագրի պայմանները այնպէս էին կազմած, որ նրա ամուսինը սկզբում կախումն ունէր աներոջից, իսկ յետոյ իր կնոջից:

Փօֆրուան ամէն ինչի համաձայն էր առանց հակառակութեան. մի՞թէ այդ միևնոյն չէր մի մարդու համար, որ հարստանալու համար չէ ամուսնանում:

Ծերուկ

Այլ եւ այլք

ԻՆՉՊԷՍ ԵՆ ԱՅԺՄՍ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐ ՃԱՐՈՒՄ

Հայոց մէջ լրագրներ տարածելու համար, հաւանական է, որ մեծ յաջողութիւն պէտք է ունենար «Matin» և «Français» լրագրների հրատարակիչների՝ նորերս գործ դրած միջոցը, եթէ միայն հայ հրատարակիչները մի փոքր էլ է նիւթական միջոց ունենային, որ, ինչպէս յայտնի է, դժբախտաբար, չըկայ: Ինքներդ դատեցէք:

Լաւ գրականական յօդուածներ, պրէմիաներ, արդէն հնացած բաներ են: Պարիզի յիշած լրագրների հրատարակիչները հնարեցին մի զարմանալի միջոց՝ բաժանորդներ որսալու համար: Նրանք տալիս են ընծաներ ոչ թէ բաժանորդներին, այլ պատահաբար այդ լրագրները կարդացողներին: Օրինակ, մի մարդ նստած է սրճարանում, ժողովրդական այգիում և կարդում է «Matin» կամ «Français»: Ցանկարծ մօտենում է նրան շընորհալի դէմքով մի երիտասարդ և հրաւիրում է նրան իրան հետևել:

—Այդ ինչո՞ւ համար, հարցնում է տարակուսած ընթերցողը:

—Կըտեսնէք իսկոյն, պատասխանում է շնորհալի երիտասարդը:

Նրանք երկուսով գնում են մի քանի քայլ առաջ, ծռւում են անկիւնը և այնտեղ՝ դեռ ևս մոլորուած ընթերցողին, մօտ են բերում մի վելօսիպէդ, կամ տալիս են գլխարկ, ձեռնափայտ, մի կողով գինու շիշերով լըցրած, առհասարակ մի որևիցէ պարգև:

—Ինչո՞ւ համար:

—Դուք «Matin» էիք կարդում: Ձեզ ընծայ է տրւում դրա համար: Մենք մեր ընթերցողներին ընծաներ ենք տալիս:

Տիկնանց ընծայում են կորսէտներ, դընում են նրանց հետ խանութները, ուր նըրանք ստանում են ձրի՝ գլխարկներ, ամպհովանիներ, ձեռնոցներ, զգեստներ: Երեխաներին ընծայում են խաղալիքներ: Ընծաների մէջ պատահում են աւտոմոբիլներ, ձի լծած կառքեր և մինչև իսկ տեղափոխելու յարմար ամարանոցի բնակարաններ:

Եւ ընթերցողները աճում են ոչ թէ օրերով, այլ ժամերով: Իւրաքանչիւրին թւում է, թէ նա աւտոմոբիլ կըտանի: Պարիզում շրջում են հազարաւոր մարդիկ Matin-ը կամ Français-ը ձեռքներին: Իսկ այդ լրագրների առանձին վարձած աշխատակիցները այս կամ այն տեղ ընծաներ են ցրւում: Այդ գարսողութիւնը առևտրական հաշւի վրայ է հիմնած: Ընծաները առհասարակ չնչին ծախս են պահանջում, ըստ որում այդ լրագրները ընծաներ վաճառող ֆիրմաների համար փայլուն ռեկլամներ են տպում և նրանցից մեծ վարձատրութիւն ստանում: Իսկ ընթերցողները վիճակախաղ են անում: Առաջին օրը, երբ այդ «նորութիւնը» գործ դրւեց, Matin-ի ջոկ համարներ ծախւեցան 500,000 օրինակ, այսինքն, խմբագրութեան դրամարկղը մտաւ 50,000 ֆրանկ: Իսկ հետզհետէ կըստացւի և 100,000 ֆր.: Եթէ ընծաները արժենան օրական 10,000 ֆրանկ, այնուամենայնիւ հրաշալի օգուտ է ստացւում: Երևակայում ենք՝ ինչ կըլինէր, եթէ մի այդպիսի բան պատահէր Թիֆլիսում, Գոլովինսկու պրոսպեկտի կամ Երևանեան հրապարակի վրայ. «Փոմինօն» **իր համար էր ասել:**

Խմբագիր-հրատարակիչ՝
Տիգրան Նազարեան

Поступили въ продажу слѣдующія книги!

Память. Вѣрныя средства возстановлять потерянную, возраждать новую и сохранять хорошую память до глубокой старости. Сочиненіе доктора медицины Е. Гартенбаха, издан. 4-е С. П. Б. 1901 г. ц 1 р. 50 к. съ пересылк.

„Геморрой“. Коренное уничтоженіе болѣзни во всѣхъ его видахъ, измѣненіяхъ и проявленіяхъ новыя медицинскія и гигіеническія средства.. Сочиненіе доктора медицины К. Лебеля, издан. 5-е М. 1901 г. ц. 2 р. съ пересылкою.

Физическій Міръ Женщины общедоступныя бесѣды о половихъ проявленіяхъ у женщины, женскіе болѣзни и ихъ леченіе, мужскіе и женскіе половые органы. Гигіена половой жизни. Онанизмъ, Гермодизмъ, Безсилые и безплодіе. Случайности Сонтія. Половые неврозы и прочіе болѣзни. Составилъ докторъ медицины Э. Жозанъ, съ 130-го рисунками. Издан. 3-е, С. П. Б. 1901 г. болѣе 400 стран. ц. 3 р. 50 к. съ пересылк.

Опытный Врачь секретныхъ болѣзней Настольная книга для молодыхъ людей, содержащія въ себѣ леченіе венерическихъ болѣзней, онанизмъ, мужскаго безсилія, женскаго безплодія и прочихъ болѣзней половыхъ органовъ. Составилъ докторъ медицины П. Новиковъ съ многими рисунками. Издан. 3-е М. 1901 г. ц. 2 р. съ пересылк.

Преждевременное истощеніе мужчины отъ болѣзней половыхъ органовъ, половая извращенность, онанизмъ безсиліе и леченіе. 400 ст. б. ф. съ 168-ю рисунками. Сочиненіе профессора Э. Жозана, издан. 3-е. С.П.Б. 1901 г. ц. 3 р. 50 к.

Объ онанизмѣ и безсиліи, о средствахъ снова возстановлять здоровье разстроенное онанизмомъ и безсиліемъ. Сочиненіе доктора медицины А. Брауна, издан. 4-е ц. 1 р. 50 к. съ пер.

Тысяча новыхъ случайныхъ открытій. Изслѣденіе хроническихъ и другихъ болѣзней, какъ то: Чехотки, золотухы, ревматизма, подагры, застарелаго сифилиса, паралича геморроя, малокровія, подагры, нервной слабости, глухоты, тучности, худобы и другихъ болѣзней съ присовокупленіемъ рецептовъ лекарствъ для домашняго приготовленія. Составилъ докторъ медицины А. Ильинскій въ 3-хъ част. ц. 3 р. съ перес.

Гигіена. Половой жизни. Сочиненіе доктора медицины Т. Бидера. издан. 3-е С.П.Б. 1902 г. ц. 1р.

Безсиліе половое. Совѣты страдающимъ этимъ недугомъ. Сочиненіе доктора медицины Ж. Мерсье, издан. 3-е С.П.Б. 1902 г. ц. 1 р. съ пер.

Практическія Врачебныя Наставленія вступившимъ въ бракъ, содержащія въ себѣ правила для сохраненія физическихъ способностей въ брачной жизни до глубокой старости съ присовокупленіемъ описанія половой жизни женщины. Сочиненіе доктора медицины Р. Фернау, съ рисунками издан. 4-е. ц. 1 р. 50 к. съ пересылкою.

О половомъ отправленіи съ присовокупленіемъ подробнаго описанія радикальнаго леченія половаго безсилія являющагося вслѣдствіе поллюцій, онанизма, невоздержности нѣкоторыхъ болѣзней и многихъ другихъ причинъ. Составилъ докторъ медицины Ф. Рубо, издан. 2-е, цѣна 2 р. съ пер.

Столярное искусство съ 152 рисункомъ и многими чертежами. Составилъ К. Ленцингъ, издан. 2-е, ц. 2 р. 50 к.

Съ требованіемъ этихъ книгъ, Гг. Иногородные благоволятъ обращаться исключительно на имя *Христофора Ивановича Патрова, С. Петербургъ,* П. С. Александровскій проспектъ, домъ № 7—9, кв. № 4. Требованія прошу адресовать болѣе четко, не Петрову, а *Патрову,* съ наложеннымъ платежомъ. Книги же высылаются мелочъ, можно почтовыми марками. 2—2

Հայ ընտանիքի մէջ ընդունում են գիշերօթիկ աշակերտներ։ Ամեն կերպ յարմարութիւններ և հոգատարութիւն։
Փրէյլինսկի փողոց, № 12.

Տարեմտակում է 1902 թ. բաժանորդագրութիւնը

ՏԱՐԱԶ

գրական, գեղարուեստական, գիտական և քննադատական
պատկերազարդ շաբաթաթերթի։

Տարեկան գինը 6 ր. արտասահ. 10 ր.

Հասցէն՝ Тифлисъ, ред. жур. ТАРАЗЪ *կամ* Tiflis (Caucase) Rédaction du journal TARAZ.

Открыта подписка на ежедневную (не исключая понедѣльниковъ) газету политической и Общественной жизни и литературы

„Бакинскія Извѣстія“

Программа газеты: Дѣйствія и распоряженія Правительства; Телеграммы; Общія статьи по разнымъ вопросамъ; Хроника мѣстная; общая и иностранная; Корреспонденціи; Обзоръ печати; Фельетоны; Судебный отдѣлъ; Нефтяное и горное дѣло; Смѣсь; Справочный указатель.

ПОДПИСНАЯ ЦѢНА: во 1-ое Января 1903 г. съ доставкою въ Баку и пересылкою въ другія города—3 р., на 3 мѣсяца 2 р. и на одинъ мѣсяцъ 1 руб.

ТАКСА ЗА ОБЪЯВЛЕНІЯ: За строку петита или мѣсто занимаемое ею впреди текста—10 к., а позади текста—7 к. Многократныхъ объявленій по соглашенію.

Редакція и контора изданія: пассажъ Шагиданова.

Первый номеръ выйдетъ въ свѣтъ четвертаго августа.

Редакторъ-издатель Н. А. Гринеръ.

3—3

ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՄ

Հայերէն սրբագրութիւններ և արտագրութիւններ։

Դիմել՝ Тифлисъ, противъ Артистическаго Театра, магазинъ обуви Сафарова,

Айрапету Бабурянцъ.

3—3

Տարեմտակում է 1902 թվի
բաժանորդագրութիւնը
ԱՂԲԻՒՐ պատկերազ. ամսագրի։

Տարեկան գինը 3 ր.

Վ-րդ ոսկեղէն դարը Հայաստանում՝ չքնաղ մեծագիր պատկերով՝ 4 ր. 50 կ.

Հասցէն՝ Тифл. ред. жур. АГБЮРЪ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Սմեն or, բացի կիրակի օրերից,
առաւօտեան՝

Ռ. Ա. Դաւառագեան—11—12 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.
Կ. Մ. Զիկօւանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարգային
Ե. Ի. Դզեղիեա—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Բարանովսկաեա—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Գ. Գարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

երեկոներով՝

Ն. Ն. Թասամբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.
Ա. Ն. Տգակովսկի—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբոյժ), վիներ. և մորթու հ.
Գ. Ա. Թարխանեանց—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ռ. Ա. Դաւառագեան—7½—8 ժ.

Վճարը 50 կ. չբաւականը ձրի։ Համաձորդի (փօնսիոնատ) և օպերացիայի համար առանձին։

Օ. Տ. Սուանիտակի—ատամը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմեն 11—1 ժ.

Հիանդանոցի վիրատեսուչ՝

Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ЕЖЕДНЕВНАЯ ГАЗЕТА ВЪ ТИФЛИСѢ

„Кавказскій Листокъ Объявленій“

(ИЗДАНІЕ ПРИ «БЮРО ТРУДА»).

ПРОГРАММА. Правительственныя распоряженія по вопросамъ труда. Цѣны на рабочія руки. Все озможныя справочныя свѣдѣнія. Телеграммы агентсва и частныя объявленія.

Годовая цѣна (300 номеровъ съ доставкой въ Тифлисѣ—1 руб. 50 коп. съ пересылкой—2 рубля, заграницу—4 р, Номера—1 коп.

ЦѢНА НА ОБЪЯВЛЕНІЯ отъ 2 до 4 коп. за строку въ 35 буквъ. Траурныя отъ 1 руб. до 2 руб. Объявленія въ справочномъ отдѣлѣ по 10 коп. за каждый разъ и за 20 разъ 75 коп. Скидка трудовому классу 10%. За неоднократныя объявленія скидка отъ 5 до 20% и по соглашенію. Контора редакціи: «Бюро Труда». Эриванская площадь, противъ сквера, каравансарай Тамамшевыхъ. Редакція временно находятси въ томъ же зданіи, въ пассажѣ верхній этажъ; № 28. О пріемѣ подписки и обоявленій и о срокѣ выхода будетъ объявлено особо.

2—2. Редакторъ-издатель НИКОЛАЙ ТАМАМШЕВЪ.

Дозволено цензурою. Тифлисъ, 6-го сентября 1902 г. Типографія Т-ва „Вереичевъ и Каменмахеръ“, Тифлисъ, Михайловск. пр., № 81. Телеф. № 852
Տպարան ընկ. «Վերիչևի և Կամենմախէր», Թիֆլիս, անկիւն Միխայլովեան պող., 81. Տելեֆոն № 852.